

քեն տառերով, բայց զփշագերեն շարագրելու սովորությունը:

Հրապարակված մի քանի փաստաթղթերում հայոց կաթողիկոսն անվանվում է հայոց պատրիարք, սակայն ծանոթագրություններում կաթողիկոսի փոխարեն նշված է Կ. Պոլսի պատրիարքը (ծան. 95):

Չնայած այն բանին, որ Վ. Միքայելյանն իրավացիորեն կասկած է հայտնել Կատուլ-բեյի (Խուլու-բեյի) սյունեցի լինելու վերաբերյալ, բայց անհասկանալիորեն ծանոթագրել է՝ «Կատուլ-Բեյ Սյունեցի» (ծան. 93, էջ 166), իսկ հաջորդ ծանոթագրության մեջ՝ «Կուլուլ-Բեյ Սյունեցի»:

Ծանոթագրությունների մեջ տրված են վավերագրերում հանդիպող դրամական միավորների բացատրությունները, բայց միշտ չէ, որ դրանք բավարար պատկերացում են տալիս այդ միավորների վերաբերյալ: Օրինակ, թերի են բացատրված «հայերպեր»-ը (ծան. 9) և «սուլդա»-յան ասպը-ը (ծան. 13):

Ճիշտ է բացատրված № 15 վավերագրում

հանդիպող «արդուլիներ» բառը, որ նշանակում է պահակներ, ոստիկաններ, դատավորներ (ծան. 31, էջ 158), բայց այն ոչ թե թուրքական, ինչպես նշված է ծանոթագրության մեջ, այլ մոնղոլական ծագում ունի: Նշված թերությունները ոչ մի կերպ չեն նվազեցնում գիտական ծանոթագրությունների արժեքը, որոնք բնագիտության կազմված են գիտական պատշաճ բարեխղճությամբ:

Վ. Միքայելյանի «Հայ-իտալական առևտրություններ» ժողովածուն արժեքավոր ներդրում է հայ գաղթականների պատմության ուսումնասիրման գործում: Հրապարակված նյութերը նոր տեղեկություններ են տալիս ոչ միայն Ջենովայի հանրապետության հետ դրամահայության ունեցած փոխհարաբերությունների, այլև Ղրիմում հաստատված հայ բնակչության անցյալ կյանքի և բնագիտության այդ թերակողմ պատմության մոտացված կամ թերի լուսարանված բազմաթիվ էջերի վերաբերյալ:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵԳԻ, ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Թարգմանությունը, ճեռածությունը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973, 373 էջ, գինը՝ 1 ռ. 42 կոպ.:

«Հայաստան» հրատարակչությունը վերջին տարիներին լույս է բնծայել Փափստոս Բուզանդի («Պատմություն Հայոց»), Եղիշի Կողբացու (սեղծ աղանդոց), Մովսես Խորենացու («Պատմություն Հայոց») և այլոց գործերը:

Հայ պատմիչների մատենաշարից է նաև Մատթեոս Ուրհայեցու «Ժամանակագրությունը»՝ պատմական գիտությունների դոկտոր Հրաչ Բարթիկյանի աշխարհարար թարգմանությամբ, արժեքավոր ներածությամբ և օգտակար ծանոթագրություններով: Երկը ընդգրկում է 174 տարվա պատմություն (962—1136 թթ.), իր «Ժամանակագրությունը»: Ուրհայեցին շարադրել է նյութեր հավաքելով հիմնականում հայ մատենագիրների այն գործերից, որոնք, հեղինակի վկայությամբ, «թողնալ էին զայն իսրեանց յիշատակ», հեղինակի ժամանակակիցներից տարեց մարդկանցից՝ թեև դ ծերս ունեար խօսակարգութենս ի բնութիւնս, որը տեղեակք էին անցնալ ամացն¹: Իսկ զորի վերջին գլուխը գրել է որպէս դնպրերին ականատես և ականջալուր:

¹ Մատթեոս Ուրհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 281 (զբարար ըստ մեջբերումների այս հրատարակությունից են — Ա. Գ.):

Մատթեոս Ուրհայեցին լայնախոհ և շրջահայաց մատենագիր է: Նա գրել է իրենատիպ ժամանակագրություն, որը նվիրված է Մերձավոր և Միջին Արևելքի, Անդրկովկասի և հարևան ժողովուրդների պատմա-բաղադրական իրադարձություններին: Հեղինակը շարադրում է հայ պետականության կործանման պատճառները, որի հետևանքով սկսվեց բազմաշարժար հայ ժողովրդի մասսայական արտագաղթը իր հայրենիքից:

Ուրհայեցին իր գրքում արժեքավոր տեղեկություններ է հաղորդում խաչակրաց արշավանքների, Մերձավոր Արևելքում խաչակիրների հիմնած կոմսությունների ու թագավորությունների մասին: Խոսում է նաև Կիլիկիայում և Կապադովկիայում ստեղծված հայկական ավատական իշխանությունների, Բուրխյանների հայկական անկախ իշխանության ստեղծման, թուրք-անլուկների Մերձավոր Արևելք թափանցելու մասին և այլն: Ինչպես իրավացիորեն նշում է Հ. Բարթիկյանը, «Ուրհայեցին դնպրերի ու դիմբերի սոսկ արձանագրողը չէ, այլ ուսումնասիրողը» (Ներածություն, էջ XIX): Երկում Ուրհայեցին հանգամանորեն պատմում է, թե ինչպես Հայոց Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսը (1019—1034) մի խումբ դավաճան իշխանների հետ դավեր է լարում երիտասարդ

Գաղիկ II թագավորի դեմ, աշխատելով նրան համոզել ընդունելու բյուզանդական կայսր Մոնոմախի հրավերը և զնալու Կոստանդնուպոլիսի Դավանանքին հաջողվում է կատարել իրենց սե գործը: Երբ Գաղիկը ներկայանում է բյուզանդական կայսր Մոնոմախին, վերջինս նրան ստիպում է հրաժարվել իր թագավորությունից: Պատմիչը վառ գույներով նկարագրում է այն համառ պայքարը, որ մղել էր հայ թագավորը, մերկացնելով Մոնոմախի նենգ դիտավորությունները: Հայ պետականության հանդեպ շիջմունքով է պատմում նաև Վասսուրականի նշանավոր հայ իշխաններ Թոռնիկ և Խաչիկ զորավարների սխրագործությունների մասին, որ կատարում էին նրանք թուրք-սելջուկների դեմ մղված պայքարում: Ականավոր զորավար Վահրամ Պահլավունուն նվիրված գլխում Մատթեոս Ուոհայեցին հուզմունքով պատմում է, թե ինչպես 80-ամյա ալեհեր զորավարը, ժողովրդի խնդրանքով, իր սակավաթիվ ջոկատով դուրս է գալիս բյուզանդական զորքի դեմ և ազատում մայրաքաղաք Անի:

Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրությունը» XIII դարի լավագույն գործերից է, որը բարձր է դնահատվել թե՛ հայ և թե՛ այլազգի պատմաբանների և բանասերների կողմից: Հայ պատմիչներից առաջինը Կիրակոս Գանձակեցին է, որ հայ պատմագիրների իր կազմած ցուցակի մեջ հիշատակել է նաև Մատթեոս Ուոհայեցուն², նոր ժամանակների մի շարք պատմաբաններ ու բանասերներ, որոնք զբաղվել են հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ, սկսած Միրայել Չամչյանից, իրենց աշխատությունները գրելիս առատորեն օգտագործել են Մատթեոս Ուոհայեցու երկը:

Ուոհայեցու «Ժամանակագրության» առանձին հատվածներ Փարիզում 1811 թ. ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակել է Շահան Զրբայետը՝ իր բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկի նամակն էր՝ հասցեագրված Աշոտ II թագավորին: Հետագայում հայագետ էդ. Դյուլորին Ուոհայեցու երկը թարգմանեց ֆրանսերենի և ղեկավարելով իսաղկիթ պատմիչներին նվիրված իր ժողովածուի առաջին հատորում, Դրանից հետո Ուոհայեցու աշխատությունն ավելի զբաղեց եվրոպական պատմաբանների ու բանասերների ուշադրությունը:

Այնուամենայնիվ այդ կարևոր աշխատությունը մինչև օրս հատուկ ուսումնասիրության առարկա չէր դարձել: Ընթերցանի ներածական հոդվածն ու ծանոթագրությունները գալիս են մասամբ լրացնելու այդ բացը: Թարգմանիչը կարողացել է ոչ միայն ճշգրտել «Ժամանակա-

գրություն» բաղաձայնիվ դժվարամարս տերմիններ և արտահայտություններ, այլև տվյալ ժամանակաշրջանի պատմիչներից ու հիշատակարաններից վերցրած տվյալները ստուգելով՝ բացատրել է շատ տերմինների իմաստը, ճշտել և պարզաբանել է մի շարք լավական տվյալներ, ղեկեր և դեմքեր: Թրինակ, Մատթեոս Ուոհայեցին գրում է, որ բյուզանդական կայսր Ռոմանոսը զբաղեց Կրետե կղզին, և ավելացնում է, «Եվ ուր կղզիները և ծովափնայ շրջանները շուրջ հարյուր տարի գտնվում էին արաբների տիրապետության ներքո» (էջ 2): Հ. Բարթիկյանը համաձայն է էդ. Դյուլորինի հետ, որ ոչ թե Ռոմանոս կայսրը, այլ Նիկիփոր Փոկասն է նվաճել Կրետե կղզին, որը արաբների տիրապետության տակ է մնացել ոչ թե «շուրջ հարյուր տարի», այլ «հարյուր շուրջ տարի» (էջ 295, ծան. 8): Բնագրում ասված է, որ Խլիմ Ասլանը «արար առաք զամենայն երկիրն Թորոսի՝ որդու Ռուբենայ» (էջ 203): Հ. Բարթիկյանը ճշտում է Ուոհայեցուն պարզելով, որ Թորոսը եղել է Ռուբենի ոչ թե որդին, այլ նրա թոռը (էջ 338, ծան. 30):

Այս կարգի բաղաձայնիվ փաստեր են ճշգրտված ու պարզաբանված Հ. Բարթիկյանի կողմից, որի զբաղ առաջարանն ու հարուստ ծանոթագրությունները շրջանառության մեջ են դրել նոր նյութեր, վավերագրեր, վիճական արձանագրություններ, հայերեն և այլ լեզուներով սկզբնաղբյուրներ:

Բարթիկյանը իրավացիորեն նշում է, որ Ուոհայեցին գրել է ոչ թե զուտ «հայոց պատմություն», ինչպես այդ անում էին հայ միջնադարյան պատմիչները, այլ՝ հարևան ժողովուրդների հետ հայերի ունեցած փոխհարաբերությունների պատմությունը: Իր առաջարանում հեղինակը քննարկում է Մատթեոս Ուոհայեցու օգտագործած սկզբնաղբյուրները և հանգում ճիշտ եզրակացության, նշելով, որ Ուոհայեցին «սկսում է օգտվել ոչ միայն հայկական աղբյուրներից, այլև պարտավոր էր դիմելու բյուզանդական աղբյուրներին, դիմելու ֆրանկ խաչակիրների գրվածքներին կամ հենց ֆրանկներին անձնապես՝ իմանալու այս կամ այն ղեկավարի մասին: Եվ նա այդ գործը հաջողությամբ է կատարել» (էջ XIV):

Ինչպես նշեցինք, Ուոհայեցին օգտվել է նաև հայ մատենագիրների գործերից: Հետևելով է. Խաչիկյանին³ Բարթիկյանը հանգում է այն եզրակացության, որ Հակոբ Սանահնեցու միջոցով է Ուոհայեցին ծանոթ թագավորական և

² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1962, էջ 8:

³ Է. Խաչիկյան, Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի (տե՛ս «Բանբեր երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 58):

կաթնուղիկոսական զինվանի մի շարք փաստաթղթերին (էջ XVI):

Հ. Բարթիկյանը իրավացիորեն «ժամանակագրության» աղբյուրներից է համարում նաև Փուլքերիոս Շարտրացու «Ներսիսակա զորություն» գիրքը, որը ամբողջությամբ վերաբերում է խաչակրաց առաջին արշավանքների պատմությանը:

Բացի Ուոհայեցու «ժամանակագրությունից» Բարթիկյանը բննարկման առարկա է դարձրել նաև Գրիգոր Երեցի ժամանակագրությունը, որը գիտվում է որպես նախորդ գրքի շարունակություն և նույնպես թարգմանված և ծանոթագրված է Հ. Բարթիկյանի կողմից:

Բարձր գնահատելով Մատթեոս Ուոհայեցու «ժամանակագրության» Բարթիկյանի կատարած որակով թարգմանությունը և այդ աշխատության շուրջը ծավալած գիտական պրպտումները և պարզաբանումները, կցանկանայինք մի քանի գիտողություն անել:

Մեր կարծիքով Բարթիկյանը պետք է հաշվի առներ և խաչիկյանի հետևյալ իրավացի գիտողությունը. «Տեղին է նշել այստեղ, որ Մ. Ուոհայեցու ժամանակագրության դույզ հրատարակություններն էլ (Ներսիսակա, 1869, Վաղարշապատ, 1898) գիտական չեն: Հասունացել է արդեն նոր մի հրատարակության անհրաժեշտությունը, որն իրադրություն է ինչպես Մաշտոցյան Մատենադարանում պահվող շուրջ 10 չօգտագործված ձեռագրերի, այնպես էլ պահպանվող ներսիսակա օրինակների մանրակրկիտ բաղադատության ճանապարհով»:

Ինչպես հայտնի է, Եղեհիայի կառավարիչ Թորոսի հետ բարեկամական հարաբերության մեջ մտավ խաչակրաց արշավանքների զորապետ կոմս Բալդուինը, որը անգամ որդեգրվեց վերջինիս կողմից, բայց հետո ուխտագրում կերպով սպանեց նրան ու զրավեց Եղեհիան, որտեղ և հիմնադրեց առաջին խաչակրաց կոմսությունը: Խաչակրաց արշավանքների ժամանակակից եվրոպական պատմիչներից Տիրացին, Ալբրիտ Ախենացին և ուրիշներ ամեն կերպ աշխատել են անմեղ դուրս բերել Բալդուինին Թորոս իշխանի սպանության հարցում: Գերմանական գիտնական Լյուդերսը և ֆրանսիական գիտնական Ռենե Գրոսսեն նույնպես անդրադառնում են Թորոս իշխանի սպանությանը, աշխատելով այն չկասկել կոմս Բալդուինի հետ: Գերմանացի գիտնական Կոխը 1965 թ. հրատարակած իր մեկնադրության մեջ աշխատում է փրկել «փառաբանված» ասպետի պատիվը, հայտարարելով, որ Թորոս իշխանին սպանել է ասպտամբ ամբոխը այն բանի համար, որ նա կապված է եղել թուրքերի հետ:

⁴ Եսոյն տեղում, էջ 29:

Մովսեսական գիտնականներից Գ. Միրայելյանը, Մ. Ա. Զարոբովը՝ իրենց ուսումնասիրությունների մեջ մերկացնելով վերահիշյալ գիտնականների միտումնավոր տեսակետները, ցույց են տալիս կոմս Բալդուինի նենդ վարմունքը իշխան Թորոսի նկատմամբ:

Բարթիկյանը, թողնալով բերելով Ուոհայեցուց, ցույց է տալիս, որ ժամանակագիրը դա նկատել է, սակայն չի համարձակվել բացելու խոսք այդ մասին. «Ես կուզենայի գրի առնել նրանց բովանդակ անօրինությունը, բայց համարձակվեցի, բանդի գտնվում էինք նրանց իշխանության ներքո» (էջ XXI—XXII): Հ. Բարթիկյանը ուշադրություն դարձնելով հեղինակի այս վկայությունը, ոչ մի խոսք չի ասել Թորոս իշխանի սպանության գործում Բալդուինի ունեցած դերի մասին, որի վերաբերյալ ստեղծված է վիթխարի պատմական դրականություն:

Մատթեոս Ուոհայեցու գրքում սելջուկ-թուրքերի վերաբերյալ կա երկու վկայություն. զրաքնից առաջինում հեղինակը գրում է, որ թուրքերը ներխուժել են Հայաստան 1016—1018 թթ., իսկ երկրորդում խոսվում է, թե ներխուժումը տեղի է ունեցել 1048—1049 թթ.:

Երբ հանդամանորեն ուսումնասիրում ենք մատենագիրների հաղորդած տվյալները, պարզվում է, որ մատենագիրները սելջուկ-թուրքերին չփոթել են թուրք զինվորական ջոկատների հետ, որոնք, որպես վարձկաններ ծառայել են պարսկական կամ արաբական իշխանություններին: Եմբախտաբար Բարթիկյանը իր ընդարձակ ներածականի մեջ այդ մասին ոչինչ չի գրում: Ծանոթագրության մեջ միայն վկայակոչում է «Палестинский сборник» ամսագրում Ս. Աղաջանովի և Կ. Յուդրաչյանի հրատարակած հոդվածը, որտեղ հեղինակները ցույց են տվել, թե 1016 և 1021 թթ. Հայաստան ներխուժած թուրքերը կապ չունեն սելջուկ-թուրքերի արշավանքների հետ:

Ի վերջի, պետք է նշել, որ այդ խնդրին մեզանում առաջին անգամ անդրադարձել է Հ. Մանանդյանը: Իսկ հետագայում ավելի հանգամանորեն տվյալ հարցը ուսումնասիրել է Վ. Իսկանյանը:

⁵ Տե՛ս Դ. Անգաբյան, История Киликийского армянского государства, Ереван, 1952: «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 153—162:

⁶ «Հիշատակարանը Առաքրաց», հատ. II, Անթիլիաս, 1951, էջ 206:

⁷ «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Գ, Երևան, 1952, էջ 33—34:

⁸ «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 70:

Հ. Բարթիկյանի ուշադրությունից վրիպել է նաև այն, որ վերոհիշյալ գիտնականների կարծիքով սելջուկ-թուրքերի ներխուժումը Հայաստան կատարվել է 1030—1032 թթ., որը ճիշտ չէ: Հայտնի է, որ սելջուկ-թուրքերը Տողրուլ բեկի գլխավորությամբ Պարսկաստան ներխուժեցին և գրավեցին Խորասանը 1034—1040 թթ. հետո միայն և հետևապես նրանք չէին կարող դրանից առաջ թափանցել Հայաստան:

Մատթեոս Ուհայեցու «Ժամանակագրության» մեջ հանդիպում են այնպիսի նախադասություններ, որոնք տարրեր մեկնաբանություններ են ստացել: Այսպես, օրինակ, բնագրում ասված է, որ Լոր Տեր Պետրոսը զնաց Կոստանդնուպոլիս, կայսր Կոստանդին IX Մոնոմախը թել ընդ առաջ նորա և հրամայեաց նստուցանել զՏէր Պետրոս յոսկի սելին, զոր ի ժամ զնալոյն տէր Եղիսէ յինքն առեալ, իսկ սպասաւորք թագաւորին ջանային առնուլ, և նա ուժգին ոչ տայր և տեսեալ թագաւորն հարցանէր զպատճառս շտալոյն: Եւ յայնժամ պատասխանի ետ Տէր Եղիսէ և ասէր. «Ո՛վ թագաւոր, հայրապետական աթոռ է, և ոչ որ է արժանի ի սմա նստիլ, բայց միայն Տէր Պետրոսն» (էջ 105—106): Անհրաժեշտ էր ճշտել այդ արտահայտությունը և ասլա բացահայտել բնագրի էությունը:

Բարթիկյանի գրքում առկա են առանձին նախադասությունների ոչ ճիշտ թարգմանության դեպքեր: Օրինակ, «ամենայն սրով վճարեցան» թարգմանված է «սրուրն էլ սրի բաշվեցին և ավերակ դարձան» (էջ 89):

Որտեղից է վերցրել «ավերակ դարձան» նախադասությունը, անհասկանալի է: Այնքան էլ ճիշտ չէ թարգմանված հետևյալ հատվածը. «Դարձիր, թագաւոր, յերեսաց թշնամեացս, վասն զի ի նետիցս վիրաւորեալ եղեն մեծ մասն զօրացս, զնացուք և ընդդէմ այսմ զինուցս, զոր տեսանեմք առ այլազգիսդ այլ զգեստ պատրաստեսցուք ընդդէմ նետիցդ» (էջ 47—48). Թարգմանված է այսպես. «Ո՛վ թագաւոր, նահանջիր թշնամիների առաջ, որովհետեւ մեր զորքի մեծ մասը նետահար է եղել: Դնանք և այլազգիների օգտագործած այսպիսի զենքի դեմ նոր դրահ սլատրաստենք՝ նետերից անխոցելի» (էջ 31):

Հ. Բարթիկյանը Երուսաղեմի թագաւոր Դոտֆրիդ Բուլոնացուն անվանում է «Գողեթրուա զը Բուլոն»։ Լավ կլինէր օգտագործել գիտության մեջ բնորոշված Գոտֆրիդ Բուլոնացի ձևը:

Մենք դեմ ենք Հ. Բարթիկյանի այն կարծիքին, թե «բուլա» կամ «յուլա» բառը կարելի է թարգմանել «ոռուս» (էջ 41): Մեր կարծիքով այդ բառի տակ պետք է տեսնել ուզերներին, որոնցից մի ջոկատ բյուզանդական զորքերի հետ մասնակցում էր Մանազկերտի ճակատամարտին:

Մեր այս դիտողությունները չեն կարող ստվեր ձգել Հ. Բարթիկյանի շնորհակալ աշխատանքի վրա, որ լուրջ ներդրում է սովետահայ ազգայնապաշտպանության մեջ:

Պատմ. գիտ. դոկտոր Ա. ԴԱՍՏԱՆ

ПУШКИН И ЛИТЕРАТУРА НАРОДОВ СОВЕТСКОГО СОЮЗА

Ереван, 1975, 520 стр., цена 2 р.

Пушкинские годовщины, в особенности такие «круглые» даты, как минувшее 175-летие со дня рождения поэта, не только всенародный праздник, но и активный стимул к дальнейшей разработке его художественного наследия.

Ощутимый вклад в юбилейную Пушкинапу внесли научные конференции в Москве, Киеве, Тбилиси, Ереване и Баку. Материалы этих конференций легли в основу редактируемого сборника—четвертого в серии, издаваемой Ереванским государственным университетом совместно с Институтом мировой литературы АН СССР (предшествующие выпуски посвящены Горькому, Некрасову и Лермонтову).

В книге представлено почти сорок авторов, что само по себе внушительно. Однако подлинное ее значение определяется высоким качеством большинства статей, а

некоторые из них дают пример творчески-новаторского исследования избранной темы.

Материалы, давшие название сборнику, входят в его основной, третий раздел. Первые же два (граница между ними довольно подвижна) решают узловые проблемы творчества Пушкина и роли «пушкинского начала» в судьбах русской литературы и культуры в целом. Отсюда естествен переход к последнему разделу, который заметка от редакции определяет как «жизнь Пушкина в художественном сознании народов Советского Союза». Так тематически и структурно расчлененные части книги без нажима соединяются воедино.

Впрочем, это скорее внешняя сторона дела. Гораздо важнее подчеркнуть внутреннюю согласованность этого труда. Она состоит в том, что успех исследования историко-функциональной роли творчества